ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 69-Լ

«10» 08 2023 թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ (ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ) ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԴԱՏԱԽԱԶ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2023 թվական մարտի 30-ի թիվ ԿԽ-004/23/6 որոշմամբ հաստատված՝ դատախազների թեկնածությունների 2023 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով նախատեսված դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման երրորդ հատվածի ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները գնահատելու, ինչպես նաև արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար գնահատման և բողոքարկման հանձնաժողովներում դատախազ անդամներ

նշանակելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Դատախազների թեկնածությունների 2023 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման երրորդ հատվածի «Քրեական վարույթի արդի հարցեր» դասընթացի արդյունքները գնահատող հանձնաժողովի կազմում նշանակել հետևյալ դատախազներին՝

Արթուր Զախոյան - ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ,

Կորյուն Սերոբյան - ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ,

Միեր Մկրտչյան - ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,

Հայկ Հովհաննիսյան - ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության ավագ դատախազ,

Նարեկ Մովսիսյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ:

2. Դատախազների թեկնածությունների 2023 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման երրորդ հատվածի «Քրեական

վարույթի արդի հարցեր» դասընթացի արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորվող հանձնաժողովի կազմում նշանակել հետևյալ դատախազներին՝

Արթուր Պողոսյան - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Արտակ Հարությունյան - ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին ու դատախազին, Հայաստան Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ